Անդրդարձանալով Օսմանյան կայսրության կազմով հայու-թյան ապագայի խնդրին՝ Րաֆֆին Նախեստառջ քննում է տե-րապետի թուրք ազգի եռթյուշը, նրա պետական ու քաղաքա-կան կառուցվածքի բարդորու-թյունը: Նա կտրուկ հակադրվում է հայկական շրջանակներում շը-շախաճով դալ տեսակներին, թե՛ այժմյան բարբառություններնե-րի օր կվերջանան, երբ թուրքը ճաղաքակերթով: Ամվակի հրա-պարակարկող վերոնշյալ մոյա-նությունը համարում է ցնրեթ, քանզի՝ «Թուրքը այսօր անկիր-թանգակ է, բայց զաղաքակրթ-վելուց հետո կդառնա կրթյալ, ա-վակալ, եւ այժ ժամանակ ավելի վտանգավոր կդառնա» (նույն տրոսում, էջ 13): Այս, փարկի, մոնոգատնական ճշմարտություն

Է, որն այդպիսին կմտա հարատևելու ժամանակների համար: Բաժքիին ճանարտացի, սպառնալի են ամբողջական և բնութագրում թուրքի եռթյունը, որը գինկուրական ազգ է և աշխատանք, արարելու շնորհի բնավ չունի: Այսպիսի ազգը պահպանում է իր գոյությունը՝ հպատակ ազգերին ու ազգու-թյունների ձեռքի աշխատանքով, դռան բրտիկներով: Թուրքը «Սիւ վիթթարի վիշապ է, որը կանտում է, և սուտն է, ոչնչացնում է, ինչ-որ արդյունաբերում է ողորմելի հպատակի աշխատատեղ ձեռքը: Այս վիշապը կոչ է տալիս ամբողջ ազգերն ու ժողովուրդներ՝ իր մարմինը պարարտացնելու հա-մար» (Նույն տեղում, էջ 13):

Որպես հեռաձայն մտածող գործիչ Բաֆֆին հարա ժողովրդի ապագան չի տեսնում թուրքական վայսրության վարչական կառուցվածքում և երա ասհմաններում։ Նա դատապարտում է հայերի կրկյր հնազանդությունը թուրքական բարբարոս իշխանություններին, քանզի հայկաաաարմ հպատակությունը մի այլախիս տերության հանդեպ, որպիսին Թուրքիան է, նշանակում է անտրտունը տալն թրակայի թուրք բարբարոսությունները։

«Ինչ վերանորոգություններ պետք են Տաճկանի Հայաստանին» ուսումնասիրության մեջ Րաֆֆին, քննության առնելով Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի հրատարակած «Տեղեկագիրքը», նշում է Նրանից բխող այն կարեւոր 4 դրույթները, որոնք արեւմտահայության դանդաղ բնաշնչման պատճառ են հանդիսանում: Դրանք են. ա) անապահովություն անպրոստի և սեփականության, բ) անապահովություն կյանքի, գ) անարդարություն դատաստանի մեջ և իրավունքի պաշտպանության, դ) անապահովություն ազգային առանձնահատկությունների: Նրա համոզմամբ՝ Տաճկահայաստանի հայերի վիճակը բարդորեւու համար գործի որվելիք վերանորոգություններն այն ժամանակ վիային կստող են կայսրականադմարտի:

Նել, երբ լիակատար բավականություն կտան վերոհիշյալ չորս կետերի բարվոքմանը:

հորունկ պատմաբանի ու աւաղառ սոցիոլոգի հմտութեամբ, մեկ առ մեկ ընկում, մանրամասն պարզաբանում է սույն կենտրոնի խտացված խնդիրներն ու հիմնահարցերը, լուծման մեթոդներ առաջարկում: Մասնավորապես անդրադարձնալով եւ Սան Ստեֆանոյի եւ Բեռլինի դաշնագրերի 16-րդ ու 61-րդ հոդվածներով նախատեսված պարտավորություններին, Նա նշում է, որ թուրքական կառավարությունը նույնիսկ լավագույն ցանկությամբ դեպքում չի կարող անգնել հայերին պաշտպանել՝ զինալ մահմեդականներին՝ վայրագություններով: Ուրեմն՝ հայերին պետք է թույլ տրվի, որ իրենց իրենց պաշտպանեն, եւ դա այլ կերպ լինել չի կարող, քան միայն «իրավունք տալ, որ հայերը գնեն կրեն որպես իրանց դրացի պագրեր, եւ բացի դրանից, թուրքիայի զինվորական մեջ իրանք չեն մասնակցեն» (Մուկյ տեղում, էջ 49): Նա իրաւունակաւ, ճշմարիտ մոտեցում էր, քանի որ գինկված ջրօրդի դեմ առ դեմ միայն զինված մարդը կարող էր պաշտպանվել ի պաշպանել իր ու մերձավորներին ապիտու իրավունքը: ԲաժՖին քաջ գիտեր թուրքական իրականությունը, գիտեր, որ թուրքական տնրւթյունը բնակեցված է ալիախի ցեղերով ու ազգություններով, ուրուե մշտապես միմյանց հանդէպ բախման ու արյունահեղութունների մեջ են:

Ուրեմն՝ միայնաց դեմ լոկ սրով բախվող ու պայքարող այդ միջապայուում ինչո՞վ կարող էր նրանց ընդդիմադրեր անգնել ու անգործ իպոյ:

Հրապարակախոսը գտնում էր, որ հայերը փոխանակ զինվորական հարկ վճարելու, նույն տուրքը «ապահելի» իրանք երկրում միլիցաներ, որոնք խաղաղության ժամանակ ապահովում են երկիրը երեքիս հարձակումներից, իսկ պատերազմի ժամանակ օգնեն պետությանը: Այլ կերպ ապահովություն քրդերի, չեքեզների և ուրիշ վայրենի ցեղերի բարբառություններով մենք չենք ճանաչում» (նույն տեղում, էջ 51):

Շաղկապակապակություն՝ էջ 7

Սկիզբը՝ թիվ 5-6
Երբ Գորկու արվեստը զարգացում ապրեց, նա դարձավ առաջին ինքնավարական իրերի հայկական օջախի գլուխը: Նրա ներքին տեղանքը հավասարակշռվեց կոմիկական թեթևության միջոցով, ինչպես նաև պաշտպանականության զգացումով, որը երեւան է գալիս նրա կտավներում, ինչպես, օրինակ, «Օրացույցները» գործում: Վերջինս Գորկու գլուխգործոցներից մեկն է: Սրանում հումորային կերպով պատկերված է մի քնտանիքի երեխան՝ կրակարանի դիմաց: Կտավում ներկայացված յուրաքանչյուր ֆիգուր նույնացվում է թղթաշողի եւ չափազանց նատուրալիստական գույների միջոցով: Քննադատ Ռեյնոլդ, մեկնաբանելով այդ նկարը, ցույց է տալիս ամեն մի նկարչական ձեռի զարգացումը եւ դրա վերջնական արտահայտչական: «Ցուցադրելով իր օրացույցական ոճի խորհրդանշանները մենք՝ Գորկին կիրառում է գույնը թե՛ ձեռի նույնականությունից խուսափելու եւ թե՛ այն մթազանցելու համար: Նա այս տեխնիկան հասցրեց կատարելության: Արվեստագետը նախ եւ առաջ կիրառում էր գույնը ձեռք նույնացնելու համար: Նա նաեւ նպատակ էր հետապնդում դիտողին շփոթության մեջ գցել՝ միևնույն ստվերը կրկնելով անտարածաբանական ու միևնույն ժամանակ դուրեկան տեղակայումով» (Ռեյնոլդ, 125):

Նշված կտավը նմանապես ցուցադրում է Գորկու զգայունությունը փոքր դետալների հանդեպ, որոնք հարդորակցվում են մարդու ու նրա տրամադրության հետ: Ընդու նույն բանը կատարվում էր Ռուսիայի մանրանկարներում: Հագեցած լինելով նման կապերով՝ Գորկու նկարներն անմիջական կապի մեջ են մտնում նրա հետ:

Մի առիվով Գորկին քննադատել է սյուրռեալիստների՝ ասելով. «Սյուրռեալիստներին հետևողների քիչ են հետաքրքրում արվեստի ավանդույթները եւ դրանց կապերով՝ Գորկու նկարներն անմիջական կապի մեջ են մտնում նրա հետ:

ԱՐԴԵԼ ԳՈՐԿՈՒ ԱՐՎԵՍՏԻ ԵՆԹԱՏԵՐԱՏԸ



Սյուրռեալիստների զաղափարները բավականին տարօրինակ են եւ փոքր-ինչ անուրջ: Դրանք գրեթե զվարճալի են: Իրականում նրանք այնքան լուրջ չեն մոտենում նկարչությանը, ինչպես որ հարկ է: Արվեստը պետք է մշտապես լուրջ եւ անկեղծ լինի: Հավանաբար մեր մոտեցումների տարբերությունը պետք է բացատրել նրանով, որ ես հայ եմ, իսկ նրանք՝ ոչ: Արվեստը պիտի լուրջ լինի, առանց սարկազմի եւ կոմիզմի: Մարդը չի կարող ծիծաղել մի բանի վրա, ինչն ինքը սիրում է» (Նամակ 39):

Ներկայացված դրվագը հստակորեն արտացոլում է հայերին բնորոշ զգայունությունը:

Թե՛ Գորկու արվեստն ունակ է պրոբլեմներ հանադր, սակայն այն երբեք չի կարելի բնութագրել իբրեւ անուրջ:

Գորկին, մերժելով սյուրռեալիստներին՝ ավանդույթներին չհետևելու պատճառով, պահպանում է այն որակը, որն ստեղծվում է բացառապես կարգապահության շնորհիվ: Նա պարզաբանում է իր գեղագիտությունը՝ գրելով, որ «մեծ արվեստը պետք է բարոյությունից, բազմաթիվ նոր ու բախվող գաղա-

փարների բախումից» (Նամակ 24): Այս հետաքրքրությունը՝ կապված նոր մտահղացումների բախման հետ, զաղափարական նյութ ապահովեց նկարչի ստեղծագործական փորձերի համար: Ոչ մի նորարարություն ինքն իրեն չէր կարող ապահովել այդ նյութը:

Մեծանուն նկարիչը, առավել օտարվելով սյուրռեալիստներից, իր տեխնիկան ստանում էր ոչ թե անգիտակցականի անբացատրելի խմորումներից, այլ չափազանց զգացական անցյալի՝ շարունակաբար մթազանցող հիշողություններից: Վերջիններս կարող էին վերածվել միմյանի գիտակցական ջանքերի շնորհիվ: Նմանապես կարգի աշխատանքի տարբայնությունը չուներ մեխանիկական բնույթ: այն բնականորեն բխում էր նրա խորհրդածություններից: Ամենաեական այն է, որ Գորկին, հավասարության նշան դնելով սյուրռեալիստների և սերգլանց ակադեմիական արվեստի միջև, բացահայտում է մոդեռնի եւ հետմոդեռն արվեստագետների մեծ մասի թվացյալ յուրօրինակությունը: Սյուրռեալիստները, մերժելով ավանդույթների կարեւորությունը՝

արվեստագետի մասին դատում էին այն բանի հիման վրա, թե որքան շատ պայմանականություններ է նա հաջողությամբ յուրացրել եւ կիրառել իր արվեստում» (Նամակ 45-46): Գորկու առավելությունն այն էր, որ նա ունակ էր գնահատելու ճշմարիտ արժեքները՝ անկախ դրանց ծագումից: Արվեստագետի ու անկույթների կառուցելու մի կամուրջ անցյալի գեղագիտական ավանդույթների եւ այն լուրջ խնդիրների միջև, որոնք մշտապես առկա էին 1930-40 թթ. ամերիկյան նկարչության մեջ, հաստատեց նրա գեղարվեստական մեթոդի կայունությունը: Արվեստագետն իր արվեստի միջոցով անդրադառնում էր այնպիսի լուրջ հարցերի, ինչպիսիք են սերն առ մարդ արարածը, բնությունը, գեղեցիկը եւ առաջնությունը՝ հասնում մարդկային բարեկեցության (տե՛ս Gorky A., «Toward a Philosophy of Art» trans. Karlen Mooradian, էջ 36): Նշված թեմաները չի կարելի բնորոշել որպես մոդեռնիստական: Դրանք թեմաներ են, որոնք մշտապես արդի են:

Արշիլ Գորկու արդիականությունն առավել ամրոջապես արտահայտվել է արքայազնիայի մասին ունեցած նրա տեսակետների մեջ: 1947 թ.: վախճանից մեկ տարի առաջ, նա գրել է հետևյալը. «Արքայազնիայի մարդու ստեղծագործական երեսակայության գլխավոր շարժիչ ուժերն են» (Նամակ 39): Այս ընդգրկուն նամակում նկարիչը բացատրում է, որ արքայազնիայից սերող մեզ հնարավորությունն են ընծառում անցնելու բնության սահմանագծերը: Բացահայտելով «Նորը»՝ մենք կրկին անգամ հասնում ենք այն սահմանագծին, որից այն կողմ այլեւս ոչինչ գոյություն չունի:

Շարունակությունը՝ էջ 8

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ - ԼԵՎՈՆ ԶԱՎԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ

Սկիզբը՝ էջ 5
Մեր հոգվածում արդեն հիշատակված «Վահան Թեքեյանի նամակները Լեւոն Չաւեն Սիւրմեւելանի» գրքի իր առաջաբանում նա գրում է, որ պետք է շահել «կոնիք Չայ Չոգիլի», բայց անմիջապես ավելացնում. «Չենք կրնար դիմարդել պատմությանը ընթացքին: Ուշ կամ կանուխ՝ պիտի կորսնցնենք մեր լեզուն, բայց փրկելու ենք Չայ Չոգիլի: Պետք է որ պահենք մեր եկեղեցին, մեր երաժշտությունը, մեր գրականությունը, ի հարկին թարգմանություններ, կամ անգլերենով» (տե՛ս Նշված գիրքը, էջ 16): Ինչպես ասում են, մեկնաբանություններն ավելորդ են, քանի որ առանց «մեր լեզվի»՝ «Չայ Չոգիլի» չի կարող պահպանվել աշխարհի եւ ոչ մի լեզվով:

Այդուհանդերձ, մեզ հետաքրքրողը մեր հոգվածում եղել են միջին այդ վեպերի ու ժողովածուները ստեղծող Սյուրմեւելան ու նրա կյանքի այն հատվածը, որը կապված է մեր գրականության մեծագույն դեմքերից մեկի՝ Վահան Թեքեյանի հետ:

1926 թ. հունվարի 18 թվականի իր նամակում Թեքեյանը Սյուրմեւելանին տեղեկացրել էր, որ ինքն օգնել է նա ինչպես որի՝ ընդունվելու Կահիրեում բացված Պերպեյանի աղետոսի վարժարան, ովքեր արդեն իսկ հատուն սիրող:

Եւ պիտի կարողանան իրենց ել փորել կյանքը, հույս հայտնել, որ այդ որբերը իր մասին պիտի մտածեն «իբրեւ մեկու մը, որ բախտին դեմ բախտ եղաւ իրենց», ու ինքը, երբ մեկան է մնում, հաղթ է տալիս իրեն:

Հաշուեյադարդ. ի՛նչ մնաց, կեանքէն ինծի ի՛նչ մնաց, ինչ որ տղի ուրիշին, լևտարոհիսա՛ր՝ ա՛յն միայն:

Թեքեյանը նամակը վերջացրել է՝ կոնկրետացնելով իր խոսքն այս անգամ ուղղված Սյուրմեւելանին. «- Եւ ինչ որ քեզի կուտամ իբրեւ մտածում եւ իբրեւ զգացում, ինծի կը մնայ ամբողջով...» (Նամակների, էջ 292-293):

Այդպես ամբողջովին Թեքեյանին մնացին նաեւ Սյուրմեւելանի հասցրած բաժանումն ու վիրավորանքը: Սա է բուն ճշմարտությունը: Ճշմարտությունը, որը շատ սիրտու է:

Չնայած խզումին՝ Ամերիկայում բնակվող Սաթեյանի Կրեյոնի ուղղված 1944 թ. հունիսի 20 թվականի նամակում Թեքեյանը մեծապագաբար հետաքրքրվել է Լ. Չ. Սյուրմեւելանով, հարցրել, թե արդյո՞ք նա թղթակցում է Սյուրմեւելանի հետ. «... Եթե այո՞, ըսե՛ք, որ ի յաջողություններով ուրախ եմ ու պիտի ուրախանամ նաեւ իր մեկ երկուրորով» (Նամակների, էջ 479):

Այսպես, ամեն բանից վեր, Թեքեյանն ունեցել է նաեւ մեծ հոգի, որը նրա ողջ կյանքի ընթացքում բաբախեց նաեւ ուրիշների համար՝ լինեն նրանք օտարներ, գրական առաջին քայլերն անող երիտասարդներ թե ծածկ ու աշխատանք չունեցող որբեր: Չավեն Սյուրմեւելանի հետ հարազատության լուրջ քաղաքական զուգընթաց ու նրանից բաժանվելուց հետո էլ Թեքեյանը կյուրթական աջակցություն է ցուցաբերել եւ կամ բարեկամություն արել մեր գրականության մի շարք նշանավոր դեմքերի հետ, որոնցից հատկապես պիտի նշել Աղշամ Տատրյանի, Գեղամ Ֆեդեյանյանի, Ըահան Շահ-Նուրի, Պետրոս Չարոյանի, Վահե Վահյանի, Վահե Հայկի, Չարեի Ռոբերտի, Անդրանիկ Անդրեասյանի ու էլի շատերի անունները:

Երանց բոլորից, ինչպես ինքն է խոստովանում, Թեքեյանը փոխադրած հարգանք է տալից, մանավանդ ուրախացել նոր ուժերի ասպարեզ գալով. «Եթե կայ բան մի, որ կրնայ ինծի իրական սփոփանք եւ սիրող երկարածու ըլլա՞լ՝ ատիկի երիտասարդ սրտերու մեջ գտած արձագանքս է» (Նամակների, էջ 355):

Ցավից, այդ ամենի մեջ եղավ ու մնաց մի անամոռ սպի, որը, թվում է, ոչ մի սփոփանք այդպես էլ չունեցավ:

Առաջարկվող հոգվածով մենք չենք ուզեցել հետին թվով, տարիների հեռավորությունից ստանձնել դատավորի դեր եւ արդարացնել կամ մեղադրել հոգվածում ներկայացված կողմերից ուրեւ մեկին: Մենք հավանք չենք եղել նաեւ ասելու, թե Սյուրմեւելանի կյանքի երկրորդ մասը նվազ արժեքավորման է արժանի իր կյանքի առաջին մասի պատճառով: Ընդհակառակը, անգլիագիր Սյուրմեւելան անուրախալի եւ կարեւոր դեր խաղաց իր գեղարվեստական արձակով, որն օտար ընթերցողներին ճանաչելի դարձրեց, մի կողմից, մեր ազգային ճակատագրին, մյուս կողմից՝ մեր գրական ու հոգեոր մշակութային արժեքներին, որն եկավ հաստատելու գրողի այն խոսքը, թե. «Չկա՛յ մեկը, որ հայ լեզուն սիրտ ինձմէ անելի խորապես: Բայց ես կը հաւատամ աշխատանքի բաժանումին: Եւ կրնամ որդեկան մամիկեան գրող՝ Աւետի՛ս մեծ չափով ծառայել իմ ժողովուրդին ու անգլերեն գրելով՝ չեմ դադարի հայ գրող մը ըլլալէ» (Վահան Թեքեյանի նամակները Լեւոն Չաւեն Սիւրմեւելանի, Նիւ Եորք, 1950, Յառաջաբան, էջ 17):

Բայց կա փաստը. փաստը բարեկամության եւ փաստը բաժանման: Հետեւաբար, երեւոյթը նաեւ ճանաչողական արժեք ունի



Եւ ինքնին հետաքրքրական է թե՛ մարդկային հոգեկան փոփոխաբերությունների տեսակետից եւ թե՛ գրական-մշակութային առումով, քանի որ խզման պատճառի (կամ պատճառների) վերջինսումը ստույգ է դարձնում Թեքեյանի եւ Սյուրմեւելանի անհատները ոչ այնքան հոգեբանական անձնական շփումները, որքան ազգային մտածողության ու հետաքրքրությունների նկատմամբ նրանց ունեցած դիրքորոշումները՝ իրենց կյանքի որոշակի շրջափուլում:

Արծրուն ՎԱԿՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր

Սկիզբը՝ թիվ 4-5
Յուրաքանչյուր արվեստագետի ձեռագրման վրա վճռական ազդեցություն ունեն ծննդավայրը եւ հայրենի բնությունը: «Յրեշտակներ մանկության երկնքից» շարքում Յու. Գրիգորյանը բանաստեղծականացրել է Գյումրին: Ծննդավայրի մասին գրած նրա բանաստեղծությունները կարող ենք համարել Գյումրու մասին քաղաքագրություն, Յու. Գրիգորյանի Գյումրի-Նամեն, որը գյումրեցիների՝ իրենց քաղաքի նկատմամբ ունեցած մեծ սիրո ապացույցն է, քաղաքի գեղարվեստական պատկերը: Եվ ինչպես յուրաքանչյուր գյումրեցու, այնպես էլ բանաստեղծի համար քաղաքն ունի կենսական նշանակություն.

*Ես մոտենում եմ եզր, ինչպես
քնատ երեխա, որը մութ
սենյակում,*

*աչքերը փակ դեպի իր
անկողինն է գնում
ձեռքերն առաջ պարզած:*

Էջ 125):
Բանաստեղծական տողերում գգով են գյումրեցիների հումորը, տեսնում քաղաքի սեւտուֆ տների ուղիղ շարանը, փողոցներն ու մայրքերը, մայրքերին կանգնած երեք զուռնաչիների, լսում նրանց տխուր նվագը, տեսնում բաղնիք գնացող կարմաթուշ պատավների հանդիսավոր խումբը: Չայտնվում են վարապարիկների մոտ «գոլ տված» մարդկանց խմբում եւ հասկանում, թե ինչ խորհուրդ ունի կիրակին գյումրեցիների համար: Բանաստեղծի փոշոտ մանկության օրերի միջով անցնում են «ժշտականի Կադրն» միշտ անտարամադիր, դաժան՝ ճամփին պատահած շների նկատմամբ, մաագործ Ավն՝ նախ շների, ապա կնոջ, զոքանչին ու հարեանների հայիտը, վարապարիկների խումբը՝ խիստ գործնական, վարժ շարժումներով: Այս ամենը ստեղծում է հին Գյումրու ամբողջական պատկերը, նիստուկացը նրա բնակիչների, որոնք ապրում էին երջանկության ու դժբախտության մասին ունեցած իրենց պատկերացումներով, հայացքներով միշտ ապագային հառած («Իսկ հայացքը միշտ նույնն է մտում», «Երեք զուռնաչի», «Յի գոռը», «Այս գիշեր եւ վաղը ցերեկը...»): Յու. Գրիգորյանը, որ հին քաղաքը՝ կոլորիտային կերպարներով եւ կենցաղով, իր արտահայտությունն է գտել նաեւ «Գերեզմանի» վիպակում:

ՄԵԴԻԱՎԱՅՐԻ ԵՎ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԴԱՏԿԵՐԸ

Յու. Գրիգորյանի

«ԿՐԵՏԱԿՆԵՐ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐԵԻՑ» ԵՄԲԼԵՄ



1988 թ. ավերիչ երկրաշարժի իր արձագանքը գտավ Յու. Գրիգորյանի Գյումրու մասին: Գրականագետ Ա. Նիկողոսյանը նկատում է, որ նախաերկրաշարժյալ այն բանաստեղծությունները, որոնք ուրախ-երգի-ծական-պարոդիկ կերպով նկատում են իրեն, երկրաշարժից հետո ձեռք են բերում նոր որակ (տե՛ս Արմենիկ Նիկողոսյան, Գրառումներ ընթացքից, Եր., 2007, էջ 47): Գրիգորյանի բանաստեղծությունները դարձան երկրաշարժի եւ պատերազմի բերած սարսափները սեփական մաշկի վրա անմիջականորեն զգացող ցաված հոգու արտահայտություն, ցավ, որ ծնվել էր հայրենի քաղաքի եւ նրա բնակիչների հանդեպ ունեցած սիրով: Նա գրեց մի շարք բանաստեղծություններ, որոնցում խոր ցավով պատկերեց հայրենի եզերքի անդամալի կորուստը, համընդհանուր ցավի ու տառապանքի մթնոլորտում ապրող բնակիչների հոգեվիճակը: Յու. Գրիգորյանը պատմում է ցուրտ քաղաքում վրանի տակ վիստացող առեւտրերի հետ գիշերներ լուսացնող մոր, մեկ շիշ կաթի համար ժամերով հեռոք կանգնած հոր, ամուսնու եւ երեք զավակների կորցրած ու վշտից արդեն իսկ խելագարության եզրին գտնվող ջահել կնոջ մասին: Ընդհանրացման մեծ ուժ ունի գեղարվեստական հետեւյալ պատկերը.

*... չե, հանկարծ սառց կիր,-
մի փուսն հերիք է, ճիշտը մեկն է,
թող բոլորը
իրար հետ լինեն, երեսներս
փոքր են, թող հայրը
հետները լինի, ինչպես չլինի
երեխա են, չվախենալ
հանկարծ...*

Էջ 175
Գրիգորյանը մարդկային ապրումը պատկերում է բնության հետ սերտ կապի մեջ: Պատկերացվոր համեմատությունների եւ հակադրությունների միջոցով բանաստեղծը ցույց է տալիս ջահել կնոջ վշտի խորությունը, որի մազերը, ըստ էության, ճերմակում են ոչ թե ծախ շերտից, այլ վշտից: Յու. Գրիգորյանը դիմում է հայ գրականության մեջ արդեն

տարածված մի ձեւին, երբ սիրած կինն ու հայրենիքը նույնանում են: Եվ հայրենիքի նկատմամբ ունեցած այդ մեծ սիրո եւ նվիրումի պատճառով էլ հեղինակը չի կարող ներել իր սիրո առաքյալին՝ ծվատվելու, իր դեմքն ու դիմապիսին անճանաչելիության աստիճանի կորցնելու համար.

*Բայց ես երբեք չեմ ների թե՛
այս օրը,*

*երբ նայեցի դեմքիդ
եւ չճանաչեցի...*

Էջ 173)

Յու. Գրիգորյանը հարցադրումներ քաղաքային եւ հեղինակի վշտի անչափելի խորությունը. ցավը սրտում, որը եւ լացը ակնաչին, արցունքներն աչքերին՝ այսուհետ ինչպե՛ս պիտի ապրեր ինքը: «Դեկտեմբերյան այն գիշեր...» բանաստեղծության մեջ քաղաքի եւ հոր կորստի ցավը նույնանում են: Քնարական հերոսը գրուցում է ինքն իր հետ՝ վերապրելով անցյալը, երբ դեկտեմբերյան մի գիշեր քաղաքի պարիսպների մոտ իր թաքցրել արցունքները եւ լաց էր եղել, ինչպես տարիներ առաջ, երբ հայրը հրաժարվել էր այլեւս ապրել այս աշխարհում: Տարիներ հետո, երբ փորձել է քաղաքի մասին բանաստեղծություններ գրել, հասկացել է, որ իր ամենակարեւոր բառերն արտաքին է ավերված քաղաքի պարիսպների տակ:

Ուժգին հարվածից ցնցված բանաստեղծը երբեք չկարողացավ մոռանալ իր տեսածը՝ ավեր ու մահեր, թշնամու ատելությամբ

նորածիններին խեղդող ծննդատներ, մարդասպան շենքեր: Զաղաքը դարձավ բանաստեղծի սրտում փորված վիթխարի գերեզմանոց, ինքը՝ ողբերգակ, իսկ նրա ողբը՝ գյումրեցիների եւ ողջ հայության ողբը: Լաց եղավ Յու. Գրիգորյանը, արցունքները դարձան հարագատ քաղաքի մասին պատմող բանաստեղծություններ, որոնցով նա անմահացրեց իր քաղաքը սերունդների հիշողություններում: Եվ ինչպես իր քաղաքն էր կյանք ու լիցքեր տալիս իրեն, նա էլ փորձեց իր երեքուրու կյանք տալ «անկյան կյանքին»: Թե՛ն նա երբեմն տրվում է հուսահատության, սակայն չի մոռանում երգել բացվող արշալույսների ուրախ երգը («Վերջին խոսք», «Նոր վերադարձ»): Ինչպես բանաստեղծի կյանքի առաջին ժամերին կյանքն ու մահը բալլեցին կողք կողքի, եւ «օգոստոսյան արեւն էլ մեկ ծայտաց, մեկ աղեկտուր լաց եղավ», այնպես էլ նրա բանաստեղծությունները, որոնք նրա պարզ հոգու արտացոլանքն են, գաղմկահարեցին մեկ կապույտ, մեկ կարմիր կնիք, ինչպես երազն ու դաժան իրականությունը, ինչպես կյանքն ու մահը: «Այնուամենայնիվ, բանաստեղծի հոգու գույնը մայրը չէ, այլ կապույտ, այն գարմանալի կապույտ գույնը, որ խորի-դանելում է երազը, սպասումը, կարոտը, հավատն ու մանավանդ սերը»,- գրում է Պետրոս Դեմիրճյանը (Պետրոս Դեմիրճյան, Նշված

հոդվածը, էջ 130): Իսկ ճաշակել արդեն ցավ ու դառնություն, բայց պահպանել հոգու ամրությունը, կարող է միայն քաղաքական բարձր նկարագիր ունեցող մարդը:

«Յրեշտակներ մանկության երկնքից» շարքում տեսնում ենք Յու. Գրիգորյանի բանաստեղծ-մարդուն, ով ձգվեց դեպի իր մանկությունը, ապրեց իր մանկության երկնքի իրեշտակները, նրանց կողքին: Նա ուզեց ամեն ինչ սկսել նոր տողից («Նոր տողից»), նորից բռնել ընդամենը մի վայրկյան բաց թողած մոր ձեռքը («Կարմիր արյունը, որ մարմին չունեց»), ուզեց թնկթնկալով հասնել հոր ետեղի, տունը թողնել նոր տարի, («Թողնել նոր տարի»), երգել «Առաջին սիրո երգը», ուզեց՝ ինչ-որ մեկը բաց անի իր քաղաքի դարպասները («Անվերջ վերադարձ»): Իսկ երբ փորձեց խուսել այս ամենի մասին, հասկացավ, որ իր ամենակարեւոր բառերը արտաքին է ավերված քաղաքի պարիսպների մոտ («Դեկտեմբերյան այն գիշեր»):

Իր բանաստեղծություններում Յու. Գրիգորյանը մնաց հասուն մի մանուկ, որն ապրել էր խենթություններով իր մանկության եւ պատանեկության տարիներ: Իրական կյանքից ծնված նրա բանաստեղծությունները դարձան նրա դեմքը, որը ուրախ պահերին հիշեցնում է մանկան դեմք, իսկ երբեմն էլ ա-կափում՝ ցույց տալով իր հոգու տառապանքը: Նա կառուցեց մի շենք, որը պիտի հայտնագործեն ապագա սերունդները, պիտի գտնեն նրան այդ շենքի փոքրիկ բնապարանում սեղանի առջեւ նստած ծիւցի, իսկ ամենուր էլ ամեն տեղ՝ բառեր, բառեր, բառեր, ասված ու չասված բառեր: Այս ամենը հուշում է, որ Յու. Գրիգորյանի բանաստեղծությունը կյանքն է արթել, կյանքն է տվել, սովորեցրել է սիրել: Նա, ինչպես հայրն էր պատվիրել, երբեք չմեռավ, անմահացավ իր բանաստեղծություններով, իր բանաստեղծություններում, իսկ նրա պոետիկ դարձավ «մի խել կաթիլ արցունք»՝ ծայրալու համար բացված աչքերի մեջ»:

Սարին ՂԱՅԱՐՏԱՆ



Սկիզբը՝ էջ 5

Յու. Գրիգորյանը սպառնացող վտանգը նա տեսնում էր թուրքական իշխանությունների կողմից կրոնական երկպառակություններին ուժ ու լիցք տալու մեջ, բան-գի անմիաբանության եւ անհասկացության պահպանելը մի ժառանգական քաղաքագիտություն է, որ սեփականել է մոնոլոգական թուրքական Բյուզանդիայի գահի վրա:

Եվ որ արվում է ոչ միայն հայոց հանդեպ:

Այս առումով ճշմարիտ է այն դիտարկումը, թե ինչպիսի վտանգ է սպառնում թուրքիայի հայ եկեղեցուն, որը միշտ հանդիսացել է ազգի գոյությունը պահպանող հիմունքը: Եվ Բեռլինի դաշնագրի դուրս ելույթների համաձայն՝ թուրքիայի խոստացած «կրոնական ազատությունը» մի նոր ապարեզ պիտի բացի եվրոպացի քաղաքացիների առջեւ, եւ հայերը, Փոքր Ասիային հովանավորող անգլիացիներից պաշտպանություն գտնելու հույսով, պիտի գոհեն իրենց կրոնը. «... ո՛վ կարող է մրցություն անել նրանց հետ, մեր անհոգ հոգեւորականու-

թյունը, թե մեր թեթեւալիկ ուսումնականները» (Էջ 56): Կրոնական հողի վրա երկպառակությունները չեզոքացնելու եւ ազգային միասնական ուժ ձեռավորելու համար մեծանուն հրապարակախոսը հորդորում է «Թուրքիայի հային թողնել եկեղեցին, թողնել կրոն անհատների խղճի վրա եւ ձեռք մեկնել հայ-կաթոլիկին, հայ-բողոքականին եւ հայ-մահմեդականին» ասելով նրանց. «Մենք եղբայրներ ենք, մենք միասին պետք է բաժանենք մեր ներկայն եւ ապագան, թող եկեղեցին բաժանե մեզ, միացնենք մեր ուժերը եւ միասին գործենք» (Էջ 56):

Ըստ նրա՝ կրոնը, որ մի ժամանակ բաժանել է մեզ, այժմ ազգի եւ հայրենիքի սերը պետք է միացնել ու միավորել: Չնայած ծանր ու սպանիչ քննադատությանը, Բաժնի հրապարակախոսը դեռեւս մեծ հավատ էր տածում հայ ազգության վրա: Յենց այդ հավատն էր հուսո հզոր ուժով նա ներկա ու գալիք սերունդներին ուղղված ուղերձ է հղում:

Ուղերձ, որում հետեւյալն է պատգամվում. «Բայց մեր հավատը մեծ է հայ ազ-

գության վրա, մենք հավատում ենք, որ նա ունի հարուստ կապիկական եւ կենդանի, նոր գրականական (եզու, մենք հավատում ենք, որ նա ունի պատմական հայրենիքը եւ տակավին բնակվում է իր հայրենի հողի վրա. մենք հավատում ենք, որ նա ունի իր որոշ ցեղական հատկությունները, որ դարձրել են ընթացքում չեն փոխվել, եւ վերջապես, մենք հավատում ենք, որ նա ունի իր հատուկ ազգային եկեղեցին: Լեզու, հայրենիք, եկեղեցի, ցեղական առանձնահատկություններ, ահա այն գլխավոր հիմունքները, որոնցով, հավաստաբար եւ, կայահավանքի մեր ազգությունը» (Էջ 330):

Մեծանուն հրապարակախոսը խորին համոզմունքով գրում էր, որ բավական չեն միայն եղբայրական զգացումների դատարկ ցուցումները, որոնք վերջանում են նրանով միայն, որ «ողորմելի տաճկաստան-ցու համար օղեղեն մարդներ են ստեղծում, միևնույն նա իր գուլիզ դնելու եւ հանգչելու տեղ չունի» («Մշակ», 1879 թ., թիվ 126):


Արմեն ԿԱՐԱՄԵՏՅԱՆ

Պատմական հոգ. թեկնածու

ՂԱՅԱՐՏԱՆԻ ԲԱՐԵՆՈՐՈՐԳԱՆ

ՆԻՄՆԱԿԱՐԺԵՐԸ՝ ԸՍՏ ՐԱՖԵՌՈՒ...

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՐԹՈՒՒՄ ՏԵՂԱԾՈՒՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՑ



Սկզբը՝ էջ 4

Ինչպես Մաղաքիա արք. Օրմանյանը, մենք ենք առավել ստույգ ենք համարում Ղազար Փարպեցու՝ դեպքերին ժամանակակից ու ականատես պատմիչի վկայությունը. «Եւ եկեալ հասանէր այնուհետեւ ի Կաղարշապատ... կատարէր գոտկորական ուխտս եւ զպատարագս ի սուրբ Եկեղեցոյն Կաթողիկէի, զոր հիմնարկեալ Նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ զինացեալ գործ նախնեացս իւրոց, քաջ գորավարն Հայոց Մամիկոնեանն Վահան...» (Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, էջ 380):

Մեքենոց եւս վկայություն ունի Վահան Մամիկոնյանի կարգադրությամբ իրականացված վերանորոգումների վերաբերյալ. «Այս Վահան ժողովեաց եւ զհարկս աշխարհիս Հայոց եւ շինեաց Եկեղեցիս մեծամեծս, զոր աւերեալ էր Ղարսից ի Կաղարշապատ քաղաքի եւ ի Դնի եւ ի Սգրայս եւ ի բազում տեղիս աշխարհիս Հայոց: Եւ շինեալ գերկիրս Նորոգեաց վերստին...» («Պատմության Մեքենոսի եպիսկոպոսի ի Հերակլս», Թիֆլիս, 1913, էջ 38):

Հովհաննես Դրասխանակերտցի Ավան մարզպանի մասին միայն հաղորդում է. «...շինեղ գեղեղեցիս աւերեալս ի թշնամեաց, թելադրութեամբ եւ խրատիս եւ աղօթից Նպաստիս սուրբ հայրապետին Յովհաննու Մանդակունայ...» («Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցու Պատմության Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 79):

Միջայել Չամչյանն իր Պատմության մեջ հիշատակում է, որ Վահանն ու նրա զորագունը գալիս են Այրարատ նահանգ՝ Կաղարշապատ քաղաք, եւ Մայր տաճարում գոհություն են հայտնում Աստուծո (Միջայել Չամչյան, Պատմություն Հայոց ի սկզբանէ աշխարհի..., հտ. Բ, Երևան, 1984, էջ 184):

Այսպիսով՝ պատմական հիշատակությունների եւ վկայությունների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Վահան Մամիկոնյանը քաղաքական խառնակ ու պատերազմական իրավիճակում դժվար թե կարողանար նախաձեռնել հայրապետական այրուհի տեղափոխությունը: Հնարավոր է՝ այդպիսի մտադրություն եղել է, եւ գուցե Գյուր Ա Արսեղացի Կաթողիկոսն էլ իր համաձայնությունն ու օրհնությունն է տվել, սակայն հայրապետական այրուհը տեղափոխվել է շատ ավելի ուշ, երբ Վահան Մամիկոնյանն իր փառավոր հաղթանակներից հետո դարձել է Հայաստանի մարզպան եւ գործունեության որոշակի ազատություն է ստացել:

Արիստի ԶԱՆԹԻՅԱՆ

«Վերածնունդ» միջազգային փառատոնի մասնակիցների այցը

Մայր Աթոռ Ս. Էջմիածին



Ապրիլի 18-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Գյումրիում անցկացվող «Վերածնունդ» IX միջազգային մրցույթ-փառատոնի մասնակիցները՝ ուղեկցությամբ փառատոնի հանձնաժողովի անդամ, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ Չառա Արամյանի: Հյուրերին Մայր Աթոռում ընդունեց Արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

Տարբեր երկրներից ժամանած մշակույթի գործիչներն ուրախություն հայտնեցին համայն հայության հոգեւոր կենտրոն այցելելու առիթով՝ ընդգծելով, որ մեծապես տպավորված են հայկական մշակույթի եւ ճարտարապետությամբ:

Նաթան արք. հյուրերին բերելով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Մայրապոլսի Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու լավագույն մաղթանքները, կարեւորեց «Վերածնունդ» փառատոնի անցկացումը՝ մշակութային երկխոսության, մշակույթի միջոցով ժողովուրդների բարեկամության ամրապնդման առումով:

Սրբազանը նաեւ ներկայացրեց Հայ Եկեղեցու պատմական առաքելությունը հայ ժողովրդի կյանքում, ազգային ինքնության ու մշակույթի պահպանման գործում, ինչպես նաեւ՝ ներկայիս գործունեությունը տարբեր ոլորտներում:

Չրույցի ընթացքում անդրադարձ կատարեց Եկեղեցու կողմից իրականացվող հովվական աշխատանքին, մշակութային-կրթական ծրագրերին:

Հանդիպման ավարտին հյուրերն այցելեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածին թանգարանները, ծանոթացան Հայոց Եկեղեցու սրբություններին ու հոգեւոր-մշակութային ժառանգությանը:

Լուսինյան Լյուսին

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐ ԷՋՄԻԱԾԻՆ ՏԵՂԵԿԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ԱՐԴԵՒԼ ԳՈՐԿՈՒ ԱՐՎԵՍՏԻ ԵՆԹԱՏԵՐԱՍԸ



Սկզբը՝ էջ 6

Գորկիին ենթադրում էր, որ կյանքն ինքն է գտնում իր կենսական կենտրոնը՝ մարդկային կենսափորձի եզրագծերի մոտ: Այդ իսկ պատճառով հարկ է ստեղծել նոր «անվերջություններ»՝ հանուն արվեստի առաջնությունների (նամակ 39): Այնուհետեւ նկարիչը կարծիք է հայտնում, որ արտաբանական ազատականացում է մարդկային միտքը՝ հնարավորություն ընձեռնելով երեւակայությանը՝ սահմանագծից այն կողմ մղել այն, ինչ կարելի է ընկալել ու վերահսկել՝ ուղղորդելով արվեստագետի ղեկի գագոցությունների եւ ինքնադրստումնան նոր հորիզոններ:

Ավելորդ չենք համարում նշել, որ հայոց քաղաքակրթության որոշ խորհրդանշաններն առանցքային դեր են խաղացել Արշիլ Գորկու արվեստում: Մի անգամ հենց ինքը՝ արվեստագետը, թվարկել է այդ խորհրդանշանները՝ Աղաճառ, Չարահան Սուրբ Նշան, Կարդ Բաղրիկ, Վարազա վանք, Վանա ժայռ: Գորկին ընդունում էր մշակույթի, մասնավորապես՝ ազգային մշակույթի հիմնարար ճշմարտությունը: Այդ ճշմարտությունն այն է, որ մշակույթի ստեղծագործական պաշարներն անսպառ են: Միայն այն մարդն է ունակ գտնել մարդկային կենսափորձի տարրեր հայոց

անցյալի մեջ, ով գտնում է այդ մշակույթից եւ իր մաշկի վրա գրագել է ազգային արհավիրքի տված դասերը: Եվ պատահական չէ, որ Գորկին կիսել է արվեստի տեսաբան Ջոն Գրեեմի տեսակետը, ով ասել է. «Միայն այն նկարը լիիրավ կերպով կարելի է բնորոշել իբրեւ արտաբան, որը հիմնված է ու միեւնոյն ժամանակ կայուն ինչ է, եթե ոչ խորհրդանշանների երթուղիների իմացություն» (տե՛ս Cited by Rand, Arshile Gorky, էջ 111):

Նշենք, որ հայազգի նկարիչը կարելու էր մեղմ հայկական ծիրանին՝ համարելով այն խորհրդանշան մի անցյալի, որը մարդուն տանում է դեպի տիեզերք: Սա նշանակում է, որ Գորկին մեծապես զննաատում էր այն էկզիստենցիալ հնարավորությունները, որ կարող են տալ փոքր, բնական իրերը: Հայ արվեստագետները են, մասնավորապես, պոետները ավանդաբար ողջունել են այդ հնարավորությունները: Գորկին դժգոհում էր նրանից, որ փոքր ազգերի ներկայացուցիչ արվեստագետները հաճախ սխալ են ընկալվում ու զննաատվում: Նա ստեղծագործական միջավայրում էր գտնում ազգային մշակույթի այն խորհրդանշանների մեջ, որոնք գրեթե հայտնի չեն աշխարհին: Արվեստագետն իր նախնիների պես խույս տվեց ռեչնացումը՝ մի ներքին հավերժություն բացահայտելու միջոցով: Նա ծիրանի խորհրդանշանական կերպարի մեջ գտավ հայկական առեղծվածներից մեկը: Այդ միջոց լի է կենսարար ուժով, առաջացնում է դրական զգացողություններ եւ հույս: Ծիրանը նկարչի համար կարծես կենդանի օրգանիզմ լինի, որը նրա համար ծառայել է որպես մի մոդել, որին նա ձգտում էր իրեն արվեստագետ:

Գորկին հավատարիմ էր հայ ժողովրդի հարատեւման ոգուն, իսկ նրա փորձը՝ բացահայտելու առարկայի ներքին հավերժությունը, նրան նմանեցնում է եվրոպացի ժամանակակից արվեստագետներին, ովքեր նույնպես նյութականի մեջ նոր ոգի էին որոնում: Ինչպես մի անգամ ասել է Փոլ Զիլ. «Առարկան դուրս է գալիս իր սահմաններից՝ շնորհիվ մեր ունեցած գիտելիքների: Ըստ այդ գիտելիքների՝ առարկան ավելին է, քան դրա արտաքին պատյանը, որով այն ներկայանում է մեր աչքերի առաջ» (տե՛ս Quoted by Aniela Jaffe in «Symbolism in the Visual Art» in Man and His Symbols, ed. Carl G. Jung

(New York: Dell Publishing, 1968), էջ 292):

Սյուրռեալիստների առաջատար Անդրե Բրետոնը, ում Գորկին հանդիպել էր 1940-ականների կեսերին, մեծ գովասանքի է արժանացրել նկարչին՝ կերպարը մեկնաբանելու նրա ունակության համար: Բրետոնի կարծիքով՝ Գորկին «առաջին նկարիչն էր, ով հասավ առեղծվածի լիակատար բացահայտման» (տե՛ս Quoted by Melvin P. Lader, Arshile Gorky (New York: Abbeville Press, 1985), էջ 82):

Այս բացահայտված առեղծվածը, որը դուրս մղեց Գորկուն սյուրռեալիստների ճամբարից, այն ուղին էր, որը միավորեց նրա արդի ստեղծագործությունները հայ ժողովրդի ճակատագրի հետ: Անդրադառնալով պատմության հասցրած հարվածներին՝ Գորկին ասում է, որ արվեստի նպատակը պետք է լինի ոչ թե մարդկանց զվարճացնել կամ նույնիսկ քաղաքակրթության զարգացմանը նպաստելը, այլ ընդգնել արտահայտելու (տե՛ս Bedrosian M., The Magical Pine Ring: Culture and the Imagination in Armenian-American Literature. Detroit, Wayne State University Press, 1991, էջ 218):

Շարունակելի

Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ԵՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Երիտմուսյա Հայաստան» թերթի իմպրեսարություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ gristhay@etchmiadzin.am

astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 2.5.2017 թ.

Տպագրանակ՝ 2100

Գինը՝ 50 դրամ